ձուլեան ընտրութեան հոդսը, որ հնար լինէր աղքատանոցը անկեալանոցի և որբանոցի վերածել[1]. և Ե, այն մեծ և ամենակարևոր խնդիրը, թէ Էջմիածնի մայր աթոռը անշուշտ պէտք ունենար Բագուի մէջ մի արդիւնաբեր կալուած, ինչպէս ունի Տփխիսում, Երևանում և ուրիշ տեղերում։ Այս մասին 1890 թվին գրել էի Գէորգ աղայ Լալայեանցին և պարոն Յակոբ Ադամեանցին, տեղւոյն իշխանաց հետ խորհելու. և Աստուծով մի օր կ'յաջողի։ Վերջապէս ապրելի վերջին օրերումն մեր Բագուից դուրս գալու միջոցներին հրաւէրս լսելով Գիւլբան (գիւղարան — ընկուզուտ) գիւղացի բագուաբնակ պարոն Յարութիւն Թադոսեանցն եկաւ և յայտնեց, որ իւր ազգական այրի տիկին Սօնայ Բալասիրէկեան Թադոսեանցը պատրաստ է վանքի կաթուղիկէի շինութեան համար վճարել 300 բուբլի դրամ, և խոստացաւ շուտ հասցնել, և յիրաւի Շամախի գնալուցս քանի օր չանցած, պարոն Յարութիւնը բերեց և յանձնեց ինձ Շամախում 300 բուբլին. և ես օրհնելով ու գովելով նուիրատուին և պատճառին՝ սկսեցի գործը։ Մեր վիճակային Ատենի ատենադպիր յարգոյ Աբրահամ բէկն՝ որ ամեն բանի մէջ ամենայն հաւատարմութեամբ և անկեղծութեամբ ինձ օգնում էր՝ այս բանի մէջ ևս օգնեց բարի խորհրդով, այն է Շամախւոյ եկեղեցւոյ կաթուղիկէն շինող վարպետին գտաւ և Աստուծոյ յաջողութեամբն շինել տուեցինք մի վայելուչ շնորհքով կաթուղիկէ, որոյ ծայրին կանգնեցրինք 1885 թուին նուիրած բագուաբնակ գերմանացի Զէյց եղբարց մեծադիր Խաչը՝ (տես յերես 195.)։ Բայց 300 մանէթը չբաւականացրեց, ուստի գրեցի Բագուի մեր գործակալ Խորէն աւագ քահանային, որ յիշեալ նուիրատուին խօսէ կաթուղիկէի յիշատակագիրը միայն իրենց անունովը գրել, որը և համաձայնել էր 300 մանէթ ևս նուիրել որ լինի 600 մանէթ, ըստ այսմ և յիշատակագիրը գրուեց տիկին Սօնայի դուստր հանգուցեալ Մարիամի յիշատակին՝ տաճարի արևելեան պատի վերայ հետևեալ օրինակաւն՝

---

[1]) Մկրտիչ կաթուղիկոսին ի 24 դեկտ. 1893. հ. 475, և յ 30 ապր. 1894 հ.200։

[2]) Աղքատանոցի կանոնագրութիւնն ուղարկել եմ ի սինոդն ի 28 փետրվարի 1894. համար 106։ Հաստատել տալու համար։